Արձանագրություն N 4

N <<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>>
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 21 հունվարի 2019թ.

ժ.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լիանա Խաչատրյան /բուժական գծով տնօրենի տեղակալ/

անդամներ՝ Վարդան Գրիգորյան /ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ/

Աննա Հովհաննիսյան /Կադրերի տեսուչ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

<u>Օրակարգ</u>

<u>Որակավորման չափանիշների գնահատման նիստի մասին</u>

1. Որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրած մասնակիցների անվանումները և էլեկտրոնային փոստի հասցեները:

<<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացրել են՝

2.1 <<Վիոլա>> ՍՊԸ-ն, ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ., թիվ 3, Հեռ. 010628021, էլ.փոստ՝ viola@arminco.com

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով <<Վիոլա>> ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող՝ հիմք ընդունելով **<<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>>** ծածկագրով հրավերի I մասի 7.13 կետի 4 ենթակետում նշված փաստաթղթերի առկայությունը:

2. <<Վիոլա>> ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/ Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է իր կողմից առաջարկվող ծառայության որակավորման փաստաթղթերը հրավերի պահանջներին համապատասխան: Ընկերությունը ներկայացված որակավորման փաստաթղթերին կից ներկայացրել է նաև գրություն: Գրությամբ Ընկերությունը հայտնել է .

<<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի համար Ընկերությունը ներկայացրել է գնային առաջարկ: Սակայն Գնային առաջարկը Ընկերությունը սխալմամբ ներկայացրել է ոչ թե պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, այլ միավորի գնով (մեկ հետազոտություն): Նշված վրիպումը ըստ Ընկերության պայմանավորված է նրանով, որ <<Վիոլա>> ՍՊԸ-ն նոր է սկսել մասնակցում էլեկտրոնային աճուրդին և բավարար չափով դեռ չի տիրապետում այդ էլեկտրոնային համակարգին:

Ընկերությունը գրությամբ խնդրել է՝ հնարավորության դեպքում ղեկավարվել ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 31-րդ կետի 2-րդ, 8-րդ ենթակետերով և 41-րդ կետի 4-րդ ենթակետով ու մերժել <<Վիոլա>> ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

<u>3.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.</u>

2.2 Հաշվի առնելով <<Վիոլա>> ՍՊԸ-ի վերը նշված գրությունը և ներկայացրած գնային առաջարկը գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը՝

համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի. <<1. (…): Բավարար են գնահատվում <u>հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող</u> հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:>>,

համաձայն ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝

<<40. Հայտերի բացման նիստում՝

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում (…) <u>գնային առաջարկը</u> և (կամ) հայտի ապահովումը (…) <u>ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան</u>: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:>>,

համաձայն սույն գնման ընթացակարգի հրավերի՝

5.2-րդ կետի. <<5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ (...)>>

7.4-րդ կետի. <<Աճուրդի ընթացքում (...): (...) գնային առաջարկները ներկայացվում են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որը հաշվարկվում է քանակ x միավորի գին բանաձևով:>>:

Վերը նշված նորմերից հետևում, եթե գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի պահանջներին ապա մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից ենթակա է մերժման:

Իսկ գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած գնային առաջարկը ըստ գնման ընթացակարգի հրավերի պահանջներին հարկավոր է ներկայացնել պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որի բանաձևը հետևյալն է՝ **գնման առարկայի քանակ x մասնակցի առաջարկված գնման առարկայի միավորի գին**: Հետևաբար եթե մասնակիցը իր ներկայացրած գնային առաջարկը կազմել և ներկայացրել է նշված բանաձևի խախտմամբ ապա այն գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվի անբավարար:

Այսինքն, եթե գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակիցը գնային առաջարկը ներկայացնի գնման առարկայի միավորի գնի համար, ապա գնահատող հանձնաժողովը այն պետք է գնահատի որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժի:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել <<Վիոլա>> ՍՊԸ-ի հայտը:

4. Ըստ որի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով <<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>> ծածկագրով հրավերի I մասի 7.17 կետի 2-րդ ենթակետը.

<<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>> ծածկագրով ընթացակարգի 1 չափաբաժինի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում «Յունիմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

2. **<<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>>** ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը կհրավիրվի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացությունը ստանալուց և մասնակիցների կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

5 Շահերի բախման բացակայության մասին

<<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի որակավորման փաստաթղթերի գնահատման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լիանա Խաչատրյան /բուժական գծով տնօրենի տեղակալ/

Անդամներ՝ _____ Վարդան Գրիգորյան /ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ/

_____ Աննա Հովհաննիսյան /Կադրերի տեսուչ/

Քարտուղար՝ _____ Հ. Թովմասյան